

Հաստատում եմ՝  
Հայաստանի Հանրապետության  
պետական կառավարման  
ակադեմիայի ռեկտոր



### ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

**ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Մարտին Արմանի Աղաջանյանի «Պետական սոցիալական քաղաքականության բարեփոխումների նախադրյալները Հայաստանում. ՀՀ միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատումը որպես բարեփոխումների հիմք» թեմայով ատենախոսության վերաբերյալ**

#### Հաստատվել է

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի 2025թ. մայիսի 7-ի նիստում: Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ հոգ., գիտ., թեկնածու, դոցենտ Լ. Պետրոսյանը, հոգ. գիտ. թեկն., պրոֆեսոր Ռ. Աղուզումցյանը, հոգ. գիտ. թեկն., դոցենտ Ս. Պողոսյանը, հոգ. գիտ. թեկն., դոցենտ Վ. Յարամիշյանը, ՀՀ ՊԿԱ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, քաղ., գիտ., թեկնածու Է. Ալեքսանյանը, տեխն., գիտ., թեկնածու, դոցենտ Ա. Այվազյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյանը, քաղ. գիտ. թեկնածու Գ. Ղուկասյանը, գործավար Ս. Այվազյանը:

Արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների հարատև զարգացման և արհեստական բանականության ակտիվ կիրառման գործընթացը էապես ազդում է ոչ միայն անհատների սոցիալական պահանջների, այլև ամբողջ հասարակության

սոցիալական երկխոսության, պետությունների վարած հանրային քաղաքականության, ինչպես նաև պետության կողմից սոցիալական պատասխանատվության կառավարման վրա: Անորոշություններով և տուրբուլենտությամբ հագեցած աշխարհում զարգացած պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից բազմաթիվ միջոցներ են ձեռնարկվում սոցիալական երկխոսության որակի իրատես ապահովման նպատակով, Սակայն դրանք, ըստ էության, և՛ լուրջ, և՛ գլոբալ իմաստով ակնկալիք արդյունք չեն ապահովում՝ պայմանավորված աղքատության, օտարման, արտագաղթի և էթնիկական զտումների ու պատերազմների ցանցային դրսևորմամբ: Իրավիճակը բարդանում է նաև նրանով, որ պոստդեռնի կենսաքաղաքականության հիմքի վրա հանրային (նաև՝ անհատական) կյանքի կազմակերպման գործընթացը աննախադեպ արագացրել է ունեցած ռեսուրսները «հաճույքի և սպառման» շուկայական տրամաբանությամբ օգտագործելու բոլոր հնարավորությունները: Դրա հետևանքով պետության կողմից սոցիալական քաղաքականության շարունակական բարեփոխումները և՛ զարգացած, և՛ զարգացող երկրներում, որպեսի կանխեն մարգինալիզմը և հեղափոխականացվածությունը, դրվել են քաղաքական կայունության և ընդարձակված օրակարգոց անվտանգության ապահովման հիմքում: Այդ է պատճառը, որ պետական սոցիալական քաղաքականության շարունակական բարեփոխումները դարձել է հրամայական, քանի որ անհրաժեշտություն է առաջացել ոչ միայն փոխել անձնական և հասարակական սոցիալական ընկալումներն ու սպասումները, այլև վերարժևորել դրանք՝ առկա մատահրավերների համատեքստում:

Այս դիտանկյունից, զգայունակությամբ հագեցած **պետական սոցիալական քաղաքականության շարունակական բարեփոխումների** հիմնախնդիրն այսօր ինչ խոսք միջգիտակարգային է, և քաղաքական գիտության կողմից նրա համակարգային ուսումնասիրումը հրամայական է, քանի որ այն քաղաքական գործիչների, նախընտրական և հետընտրական գործընթացներում՝ քաղաքական կուսակցությունների, քաղաքական համակարգի ինստիտուտների պրակտիկ գործունեության գործառութային բաղադրիչ է:

**Պետության՝ որպես քաղաքական համակարգի գերական ինստիտուտի, կողմից իրականացվող շարունակական սոցիալական քաղաքականության բարեփոխումների** հիմնախնդրի նկատմամբ նմանօրինակ մոտեցումների բացակայությունը հետխորհրդային նորանկախացած երկրներում հանգեցրեց օտարման, աղքատության և արտագաղթի. ինչպես նաև կենսաքաղաքականության խաթարման: Այս ամենը արդեն 21-րդ դարի սկզբից ստիպում է ոչ միայն կառավարել միգրացիոն տեղաշարժերը, այլ նաև վերարժևորել և՛ զարգացած, և՛ զարգացող պետությունների ու քաղաքացիական հասարակությունների միջև դիսկուրսի որակը: Ակնհայտ է, որ և՛ զարգացած, և՛ զարգացող պետությունների հանրային քաղաքականության ռազմավարությունն ներառելով սոցիալական

պատասխանատվություն՝ նպատակամետ է ապահովել կենսաքաղաքականության շարունակականությունը:

Արդի թվայնացվող աշխարհի բարդ և խաղային տրամաբանությամբ հագեցած իրողություններն հետազոտական նոր հորիզոններ են բացել զարգացող երկրների քաղաքական գիտության (Political Science) առջև՝ զուգահեռ ուսումնասիրել քաղաքական զարգացման գործընթացների քաղաքական, սոցիալական, տնտեսական գործոնների փոխհարաբերություններն ու փոխազդեցությունները: Ենթադրվում է, որ քաղաքական կառավարման գործընթացների նման ընկալմամբ է պայմանավորված կլանքի որակի և մակարդակի շարունակական ապահովումը: Այսպիսով, քաղաքական գիտության զարգացման ներկա փուլը բնութագրվում է, ընդհանուր առմամբ, միջառարկայական, միջգիտաճյուղային կապերի խորացմամբ, ինչպես նաև ակադեմիական և կիրառական գիտելիքների յուրօրինակ սինթեզով՝ իր տեսական և մեթոդական հենքով:

Վերոշարադրյալը մեզ հնարավորություն է տալիս փաստելու, որ Մարտին Արմանի Աղաջանյանի **«Պետական սոցիալական քաղաքականության բարեփոխումների նախադրյալները Հայաստանում. ՀՀ միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատումը որպես բարեփոխումների հիմք»** թեկնածուականատենախոսության թեման արդիական է: Աշխատության արդիականությունը հիմնավորվում է Հայաստանում վերջին տարիներին տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական փոփոխություններով, մասնավորապես՝ COVID-19 համավարակով, 44-օրյա պատերազմի հետևանքներով և Արցախից Հայաստան տեղափոխված հազարավոր մարդկանց ինտեգրման հրամայականով: Նշված գործոնները պայմանավորել են սոցիալական պաշտպանության համակարգի **շարունակական և հասցեագրված** բարեփոխումների հրատապությունը և **«Միասնական սոցիալական ծառայության» (ՄՍԾ)** ներդրման անհրաժեշտությունը: Ատենախոսությունը թեման կարևոր է հատկապես հանրային կառավարման բարեփոխումների համատեքստում, որտեղ նորարար և մարդակենտրոն մոտեցումների ներդրումն առաջնային է: Թեկնածուականատենախոսության հեղինակ Մ. Աղաջանյանը վերլուծել է **«Միասնական սոցիալական ծառայության»** կառույցի գործառույթների իրականացմանը խոչընդոտող խնդիրները, ինչպիսիք են մարդկային ռեսուրսների անարդյունավետ կառավարումը, տեխնոլոգիական ռեսուրսների թերզարգացվածությունը և սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացներում առկա թերությունները: Այս համատեքստում հեղինակի առաջադրած գործնական լուծումները կարող են նպաստել ՄՍԾ-ի գործունեության հետագա բարելավմանը և ծառայությունների որակի բարձրացմանը: Այս դիտանկյունից, ուսումնասիրությունն ունի կիրառական նշանակություն, քանի որ հեղինակ Մ. Աղաջանյանը կոնկրետ գործիքակազմ է մշակել ՀՀ-ում համակարգային բարեփոխումներ իրականացնելու համար: Գնահատելի է այն փաստը, որ հեղինակի կողմից զուգահեռ

ուսումնասիրված են նաև սոցիալական պաշտպանության ոլորտի վերաբերյալ առկա վիճակագրական տվյալները:

**Ատենախոսության առաջին՝ «Սոցիալական պաշտպանության տեսամեթոդաբանական հիմքերը»** վերտառության գլխում ներկայացված է սոցիալական պաշտպանության տեսական հիմքերը, հիմնական սահմանումները, նպատակները, սկզբունքները և գործառույթները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կենտրոնացված կառույցների դերը՝ սոցիալական պաշտպանության համակարգում:

**Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի նկարագիրը և ռազմավարական բարեփոխումները»** գլխում հեղինակը ներկայացրել է ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի կառուցվածքային, ռազմավարական և օրենսդրաիրավական առանձնահատկություններն՝ համակարգած իրականացնելով ՄՍԾ-ի ներդրման գործընթացի վերլուծությունը: Այդ դիտանկյունից անդրադարձ է կատարված ՀՀ խորհրդարանական կուսակցությունների դիրքորոշումներին՝ սոցիալական քաղաքականության վերաբերյալ:

**Ատենախոսության երրորդ՝ «Միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատում»** վերտառությամբ գլխում հանգամանալից գնահատվել է ՄՍԾ-ի գործունեության արդյունավետությունը՝ կենտրոնանալով տարածքային կենտրոնի ընդունարանի գործունեության արդյունավետության աշխատանքների, սոցիալական աշխատանքի, զբաղվածության ծրագրերի, տեղեկատվական համակարգերի և մարդկային ռեսուրսների կառավարման վրա:

Ատենախոսությունում առկա են հեղինակ Մ. Աղաջանյանի կողմից կատարված եզրակացություններ և գործնական առաջարկներ: Ատենախոսությունը ամբողջական հետազոտություն է, քանի որ համալիր գնահատելով ՀՀ «Միասնական սոցիալական ծառայության» կառավարման, կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունները հեղինակը ոչ միայն բացահայտել է ՀՀ-ում ՄՍԾ-ի գործունեությանն առնչվող արդի հիմնախնդիրներ, այլև ըստ իր առաջադրած նպատակների առաջարկել է լուծումներ: Վերոշարադրյալը հիմք ընդունելով փաստում ենք, որ ատենախոսության առանձին դրույթներ կարող են կիրառվել թեմայի հետագա գիտական մշակվածության և գիտակրթական հետազոտությունների ուսումնասիրման ժամանակ:

**Աշխատանքի գործնական արժեքը** ՀՀ «Միասնական սոցիալական ծառայության» կառավարման, կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունների հիմնախնդրի գնահատումն է: Միաժամանակ, ՀՀ ՄՍԾ-ի մեխանիզմների բարեփոխման ջանքերն են և ՀՀ-ի կողմից դրանք նպատակային կերպով կիրառելու և սոցիալական համերաշխության հեռանկարների ստեղծումը:

**Ատենախոսության ուսումնասիրության արդյունքները** կարող են օգտագործվել ՀՀ ՄՍԾ-ի կատարելագործման ընթացքում, ինչպես նաև բարձրացնել գերատեսչական կառույցների գործունեության պատասխանատվությունը:

**Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածները համապատասխանում են ատենախոսության հիմնական օրինակի բովանդակությանը:**

**Վերոշարադրյալը հիմք ընդունելով կարող ենք եզրակացնել, որ Մարտին Արմանի Աղաջանյանի՝ հրապարակային պաշտպանության դրված ատենախոսությունը հիմնականում համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից նմանօրինակ աշխատանքներին ներկայացվող պահանջներին:**

Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար մեր կողմից առաջարկվող հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսության առաջին «Սոցիալական պաշտպանության տեսամեթոդաբանական հիմքերը» վերտառության գլուխում անհրաժեշտ էր համակարգված կերպով իմաստավորել հանրային քաղաքականության արդի զարգացումներն՝ շեշտադրելով սոցիալական տարածությունում մարդու կենսագործունեության արդի դրսևորումները: Աշխատանքը կշահեր, եթե առաջին ենթագլխում հեղինակը ներկայացներ սոցիալական տարածության արժեքային բազմաչափությունը՝ ներկայացնելով սոցիալականի ռացիոնալացման նպատակով հաղորդակցության առանձնահատկությունները հանրային համակեցության ապահովման, սոցիալական պատասխանատվության ինստիտուցիոնալացման և իշխանության իրականացման մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները: Այդ առումով հեղինակին խորհուրդ կտայինք ուսումնասիրել Յո, Հաբերմասի աշխատությունները՝ ( հատկապես, 1.**Хабермас Ю.** Теория коммуникативной деятельности. Том первый. Рациональность действия и социальная рационализация. Том второй. К критике функционалистского разума / пер. с нем. А. К. Судакова, М.: Весь Мир, 2022.- 880 с.; **Хабермас Ю.** Новая структурная трансформация публичной сферы и делиберативная политика/ пер. с нем. Т. Атнашева, М.: Новое литературное обозрение, 2023, 104 с.): Հանրային հաղորդակցության արժեքային բազմաչափության վերաբերյալ Յո. Հաբերմասի կողմից մշակված սկզբունքների ուսումնասիրությունը հնարավորություն կտա հեղինակին հետագայում ընդարձակել իր ակադեմիական հետաքրքրությունների եզրը՝ դիտարկելով իրեն հետաքրքրող հիմնախնդիրները սոցիալական ոլորտի եռաչափ ժամանակի մեջ՝ անցյալ, ներկա և ապագա:

2. Աշխատանքը առավել համակարգված կլիներ, եթե հեղինակը համեմատության մեջ դիտարկեր 20-րդ դարի 50-ական թվականներին գաղութային լծի փլուզումից հետո աֆրիկական և լատինաամերիկյան երկրներում ներդրված սոցիալական ծառայության և 20-

րդ դարի 90-ական թվականներին հետխորհրդային նորանկախացած երկրներում իրականացվող սոցիալական պաշտպանության համակարգի տարբերությունները:

3. **«Նպատակը և խնդիրները» բաժնում հեղինակը գրում է** «Ատենախոսության նպատակն է համապարփակ գնահատել Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի մաս հանդիսացող Միասնական սոցիալական ծառայության արդյունավետությունը **սոցիալ-տնտեսական փոփոխվող պայմաններում (մզացումը մեր կողից է արված)**՝ վերհանելով ՄՄԾ-ի գործունեության հիմնական թերությունները և սահմանելով բարելավման հիմնական ուղղությունները»: Հարցադրում՝ **ինչու սոցիալ - տնտեսական, չէ որ ատենախոսությունը ներկայացված է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:** Այս հարցադրումը հիմնավորում ենք այն մոտեցմամբ որ աշխատանքի 44-45 էջերում հեղինակը հանգամանալից ներկայացնում է ՄՄԾ-ի կառուցվածքային չորս ոլորտները և լուսաբանելով այդ ոլորտների ֆունկցիոնալ առանձնահատկությունները գրում է, «...սոցիալական պաշտպանության ուսումնասիրությունները դադարեցին լինել սոսկ միաոլորտ և սկսեցին ներառվել այլ միջգիտակարգային հետազոտություններում»: Հետևաբար, կարծում ենք, նպատակահարմար էր **«Նպատակը և խնդիրները»** բաժնում ներկայացնել թեմայի միջգիտակարգայնությունը: Ինչով է բացատրվում այս խզումը:

4. **«Հետազոտության առարկան և օբյեկտը» մասում հեղինակը գրում է** «Հետազոտության առարկան սոցիալական պաշտպանության ոլորտն է, իսկ հետազոտության օբյեկտը ՀՀ միասնական սոցիալական ծառայության՝ որպես պետական սոցիալական քաղաքական ունեցում իրականացնող հիմնական դերակատարի գործունեության արդյունավետությունն է»: Մեր հարցադրումը՝ քաղաքական գիտության նորագույն մոտեցումներում, հատկապես երբ խոսքը զարգացող երկրների հանրային քաղաքականությանն մասին է **«արդյունավետություն»** հասկացության օգտագործումը 1996-ի սկսած հետևողականորեն քննադատվում է՝ **«ում համար արդյունավետ»** մոտեցման շրջանակներում: Այդ դիտանկյունից նպատակահարմար էր օգտագործել **«արդյունքի կառավարում»** հասկացությունը: Նկատի պետք է ունենալ, որ 1996 թվականից երբ կազմվեց ՄԱԿ-ի զեկույցը Աֆրիկայի երկրների զարգացման և սոցիալական ծառայության հասանելիության մասին մշակվեց **«Լավ կառավարում» (Good governance)** հասկացությունը ի սկզբանե 8 ապա 12 սկզբունքներով: Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ կերպափոխվող հասարակություններում **«Լավ կառավարման» (Good governance) սկզբունքների ներդրման նպատակով բազմաթիվ** դրամաշնորհային ծրագրեր են իրականացվել՝ բոլորն էլ անարդյունք: «Լավ կառավարման» սկզբունքների ակադեմիական վերլուծություն ՀՀ-ում իրականացրել է Մ.Մ. Մարգարյանը ( տե՛ս, **Մարգարյան Մ. Մ.,** Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր /Մ.Մ.Մարգարյան.- Եր.,

«Պետական ծառայություն», 2004, 308 էջ; **Մարգարյան Մ. Մ.**, Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում /Մ.Մ.Մարգարյան.- Եր., «Պետական ծառայություն», 2019, 312 էջ; նաև **Մ.Մ. Մարգարյան**, «Լավ կառավարման» սկզբունքների ներդրումը՝ որպես Հայաստանի Հանրապետությունում խաղաղության մշակույթի հաստատման գործընթաց, «Հայկական բանակ», 1-2 (75 – 76). 2013, էջ 80-91: Այս համատեքստում, աշխատանքը էականորեն կշահեր. Եթե հեղինակը ուսումնասիրեր «Լավ կառավարման» սկզբունքների ծախսողման հիմնախնդիրները ՀՀ-ում:

5. **«Ատենախոսության տեսական-մեթոդաբանական հիմքը»** բաժնում հեղինակը ցանկալի կլիներ օգագործեր վարքաբանական, գործառույթ-կառուցվածքային և սիներգետիկական մոթոդաբանություն: Դա հնարավորություն կտար հեղինակին իր թեման ուսումնասիրել՝ բացահայտելով ժողովրդավարական անցման երկրներում, ինչպես նաև ՀՀ -ում սոցիալ-քաղաքական բարեփոխումների տիրույթում վառ արտահայտված օտարման, աղքատության, արտագաղթի պատճառներն, որոնք հանգեցրել են քաղաքական զարգացման ճգնաժամերի (բաշխման, շարժունակության, մասնակցության, ինքնության, լեգիտիմության): Մինչդեռ, աշխատանքի էջ 11 -13 էջերի շարադրանքը առավել քան սոցիալական աշխատողի գործառույթների ներկայացում է: Կարծում ենք ատենախոսությունում գերապատվությունը պետք է տրվեր հանրային քաղաքականության այնպիսի եզրույթների ուսումնասիրմանը ինչպիսիք են՝ արդյունքի կառավարումը, հանրային համակեցությունը, սոցիալական երկխոսությունը և պատասխանատվությունը: Ինչով է բացատրում հեղինակը ատենախոսությունում դրանց բացակայությունը:

6. **«Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը»** բաժնի շարադրման ոճը և ձևակերպումները չեն համապատասխանում թեկնածուական ատենախոսության ներկայացվող պահանջներին: **«Աշխատության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում են ՄՄԾ-ի կառուցվածքային և գործառնական առանձնահատկությունները միասնաբար, ինչը հնարավորություն է տալիս համապարփակ գնահատել դրա արդյունավետությունը»** ձևակերպումը նորույթ չէ: Պարբերաբար շեշտադրելու փոխարեն որ **«արենախոսությունը առաջարկում է նոր մոտեցում ՄՄԾ-ի գործունեության արդյունավետության և ներառականության բարձրացման համար՝ կարևոր ներդրում կատարելով ինչպես ազգային քաղաքականության մշակման, այնպես էլ հանրային կառավարման բարեփոխումների ոլորտում»**, անհրաժեշտ էր նշվածի համատեքստում նորույթ ձևակերպել: **«Գործնական նշանակությունը ատենախոսության արդյունքների ՄՄԾ-ի բարեփոխումների և զարգացման գործընթացներում ուղղակիորեն կիրառվելու մեջ է»** միտքը համոզիչ չէ՝ կիրառման հասցեատերը **ո՛վ է, կամ ո՛վքեր են**: Ատենախոսությունում գիտական նորույթի հստակ ձևակերպումը, ըստ մեզ, բացակայում է:

7. Աշխատանքի 7-րդ և 8-րդ էջերում փաստված է, որ **«Սույն գաղափարական քննարկումների առաջնագծում են կանգնած այնպիսի ականավոր գիտնականներ ու**

տեսաբաններ, ինչպիսիք են Օտտո ֆոն Բիսմարկը (1815-1898 թթ.), Ու. Բևերիջը (1879-1963 թթ.), Թ. Հ. Մարշալը (1893-1981 թթ.), Ա. Սենը (ծն. 1933 թ.) ևն», ապա շարունակել է՝ «Պարմականորեն սոցիալական քաղաքականությունը ձևավորվել է Բիսմարկի սոցիալական ապահովագրության մոդելի արդյունքում Գերմանիայում (1880-ականներ)՝ շեշտը դնելով զբաղվածության հետ կապված ներդրումային համակարգերի վրա»:

**Օտտո ֆոն Բիսմարկը (1815-1898 թթ.)** ականավոր պետական գործիչ էր, որը միավորելով Գերմանիան՝ որպես ռայխկանցլեր մեծ ազդեցություն ուներ ստեղծված Ռայխի քաղաքականության վրա և պահպանում էր ուժերի հավասարակշռության սկզբունքը: Ակադեմիական գրականության մեջ հստակ առկա է, որ **«սոցիալական քաղաքականություն»** եզրույթը սոցիալական պետության հայեցակարգի հիմքն է և նրա էվոլյուցիոն փոփոխությունների արդյունք: Հետևաբար, ի սկզբանե տեսամեթոդական վերլուծության օգնությամբ անհրաժեշտ էր ներկայացնել **«սոցիալական պետության»** էվոլյուցիայի հստակ ցուցիչները՝ սոցիալական քաղաքականության արժեքաշահային հագեցվածության էվոլյուցիան: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ներկայացնել որ առաջին անգամ «սոցիալական պետություն» եզրույթը («Sozialstaat») շրջանառության մեջ է դրել Լորենց ֆոն Շտայնը (Koslowski, Stefan (2017), “Lorenz von Stein as a disciple of Saint-Simon and the French Utopians”. Revista europea de historia de las ideas políticas y de las instituciones públicas, նաև՝ Евстратов А. Э. Политико-правовые взгляды Лоренца фон Штейна на социальное государство / Материалы Международной научно-практической конференции «Права и свободы человека и гражданина в современном мире» 26 мая 2004 года, Омск, 2005. с.155-161): Լորենց ֆոն Շտայնի ուսումնասիրությունից հետո է միայն՝ որպես սոցիալական պետության կայացման հիմք, սոցիալական ծառայությունների փաթեթը տեղ է գտել Օտտո ֆոն Բիսմարկի պահպանողական բարեփոխումներում: Այստեղից հարցադրում՝ ինչու հեղինակը ի սկզբանե առանց սոցիալական պետության հայեցակարգի էվոլյուցիայի ներկայացման է իրականացրել իր գիտական ուսումնասիրությունը՝ **«Պետական սոցիալական քաղաքականության բարեփոխումների նախադրյալները Հայաստանում. ՀՀ միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատումը որպես բարեփոխումների հիմք»:**

8. Աշխատանքի 9-րդ էջում նշված է, որ *«թեմայի գիտական մշակվածության վերլուծությունը ցույց է տալիս, որ մինչ այժմ սոցիալական քաղաքականության կենտրոնացված կառույցների, մասնավորապես՝ ՀՀ միասնական սոցիալական ծառայության գործունեության արդյունավետության վերաբերյալ համապարփակ ուսումնասիրություններ գիտական գրականության մեջ գրեթե չկան: Այս առումով արենախոսությունն առաջին փորձն է համալիր կերպով վերլուծելու ՄՄԾ-ի կազմակերպչական, կառավարման և գործառնական առանձնահատկությունները...:*

Թեմայի վերաբերյալ որոշակի ուսումնասիրություններ իրականացվել են միջազգային կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են Համաշխարհային բանկը և ՅՈՒՆԻՍԵՖ-ը, որոնց ուսումնասիրությունների շրջանակում նաև իրականացվել են քանակական հարցումներ շահառուների շրջանում»: Այժմ մեր կողմից կատարված հարցադրումը՝ Մ. Ա. Աղաջանյանը իր ներկայացված աշխատանքով հայցում է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հետևաբար, ցանկալի է որ ատենախոսությունում շեռադրումները ներառեին քաղաքական գիտության արդի ակադեմիական դիրքորոշումները: Այսպես, 1996թվականին Ֆ. Ֆուկույաման իր «ուժեղ պետության» հայեցակարգում (**Фукуяма Ф. Сильное государство: управление и мировой порядок в XXI веке. М., 2007**) վերանայելով իր «Պատմության ավարտը և վերջին մարդը» աշխատությունում արտահայտած ազատական ժողովրդավարական միանշանակ դիրքորոշումը, ընդունեց ազգային շահի և քաղաքացիական մշակույթի վրա հիմնված պետության ինստիտուտի կայացվածության անհրաժեշտությունը: Իսկ 2019 թվականի իր հարցազրույթներից մեկում՝ «Պետության որակը Հայաստանի ամենամեծ խնդիրն է» խիստ հետաքրքիր մեկնաբանություններ է արել՝ հիմնավորելով ՀՀ-ում, առկա ժողովրդավարական անցման գործընթացում կյանքի որակի և մակարդակի ուսումնասիրման խնդիրները ակադեմիական մոտեցման տիրույթում, քանի որ և՛ միջազգային կազմակերպությունները, և՛ Համաշխարհային բանկը և ՅՈՒՆԻՍԵՖ-ը սկսած 2008թվականի համաշխարհային ճգնաժամից, ինչպես նաև COVID-19 հետո կոշտ քննադատվում են: Այդ համատեքստում կառաջարկեինք ուսումնասիրել հատկապես Լարի Դայմնդի (Larry Jay Diamond) աշխատությունները (Il Winds: Saving Democracy from Russian Rage, Chinese Ambition, and American Complacency, Penguin Press, 2019; In Search of Democracy, Routledge, 2016; The Spirit of Democracy, Times Books, 2008): Լինելով և՛ ՄԱԿ-ի, և՛ Համաշխարհային բանկի փորձագետ-խորհրդական, ինչպես նաև ԱՄՆ-ի Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր և Հուվերի ինստիտուտի աշխատանից Լ. Դայմոնդը համակարգված վերլուծում է ժողովրդավարական անցման գործընթացի ճախողումները, որպես ժողովրդավարացման որակի և պետության ոչ հետևողական սոցիալական քաղաքականության, ինչպես նաև կառավարող վերնախավի կողմից խմբային շահերը գերադասելու հետևանք: Աշխատանքը կշահեր եթե հեղինակը առաջին գլխում շեռադրում կատարելով ժողովրդավորության որակի ինդեքսավորման միջազգային չափանիշներին համեմատության մեջ ներկայացնելով ՀՀ-ում և հետխորհրդային երկրներում իրականացվող սոցիալական քաղաքականության բնույթը՝ արդյունքի կառավարման ու հանրային համակեցության շրջանակներում:

9. Ատենախոսությունը խմբագրման կարիք ունի: Գրականության ցանկը չի կազմված ըստ նորմատիվ պահանջների:

Եշված դիտողությունները և առաջարկները հետագայում կօգնեն Մարտին Աղաջանյանին բարձրացնել աշխատանքի ամբողջական գիտական արժեքը:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է, որ Մարտին Արմանի Աղաջանյանի «Պետական սոցիալական քաղաքականության բարեփոխումների նախադրյալները Հայաստանում. ՀՀ միասնական սոցիալական ծառայության արդյունավետության գնահատումը որպես բարեփոխումների հիմք» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:


Եզրակացությունը հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի 2025 թ. մայիսի 7- ի նիստում:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հոգեբանության և քաղաքագիտության» ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ  
 L. Պետրոսյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ L. Պետրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ  Ս. Պողոսյան



« 8 »  2025 թ.